

Հարաբերություն ուրիշության հետ. Կարծրատիպերի միախառնումը և քանդումը Մերձավոր Արևելքի արվեստում

Ազադե Սարջոդյան (Իրան–Միացյալ Թագավորություն) Հանրային բանախոսություն

Ինչպե՞ս է արվեստը դառնում «ուրիշ»-ը ըմբռնելու, յուրացնելու և իմաստավորելու միջոց: Նկատի առնելով ստերեոտիպականացման և (ինքնա)ուրիշացման վերաբերյալ տիրող անհանգստությունը, երբ Արևմուտքում գտնվում է հարթակ այնպիսի մի առանձնահատուկ աշխարհաքաղաքական տարածաշրջանի արվեստի համար, ինչպիսին Մերձավոր Արևելքն է: Այս բանախոսությունում վերլուծվում է այն ազդեցությունը, որ քողարկում/քողագերծում է երկդիմությունը և թողնում ժամանակակից արվեստում մերձավորարևելյան մարմինների ներկայացման շուրջ դիսկուրսի վրա:

«Ես փորձում եմ իմ ուշադրությունը սևեռել բանակցության պահերի և մասնավորապես քանդող ու ստերեոտիպական արտահայտությունների խառնման վրա, որ առկա են «տարբերության ներկայացման» պրակտիկաների մեջ արևմտյան «մեյնսթրիմ» արվեստի աշխարհում: Ներկայացնելով «տեղական» տեսանկյուն քողարկված-քողագերծված էկզոտիկ մարմինների նկատմամբ, այս բանախոսությունը վիճարկում է քննադատական գրականությունը, որն առաջարկում է որոշակի էթնիկության ցանկացած ծանոթ նշանակչից խուսափելու ռազմավարություն՝ որպես պատասխան միջազգային արվեստի ասպարեզում մերձավորարևելյան ավանդույթ ունեցող արվեստագետների օբյեկտացմանը:

Այս բանախոսության մեջ անդրադարձ է կատարվում երկու ցուցահանդեսի, որոնք տեղի են ունեցել Լոնդոնում. Քողագերծված. նոր արվեստ Մերձավոր Արևելքից (2009)՝ Սաաթչի ցուցասրահում (Saatchi Gallery) և Այրականություն. ազատագրում լուսանկարչության միջոցով (2020)՝ Բարբիքան արվեստի ցուցասրահում (Barbican Art Gallery):

Ես հետևում եմ այս ցուցահանդեսների գործերի մեկնաբանության երկիմաստությանն ու փոփոխականությանը, որ ձևավորվում են ստերեոտիպերի և դրանց քանդման փոխազդեցությունների միջոցով, ինչպես առաջին ցուցադրության մեջ՝ որպես էթնոսակենտրոն հետազոտական պրակտիկա, որը քննադատության է ենթարկվել որպես էկզոտիկացման մեխանիզմի մի տեսակ, այնպես էլ երկրորդի՝ որպես համադրողի՝ աշխարհագրական և գենդերային առումներով ներառական աշխատանք: Ես ընդլայնում եմ այս փաստարկը՝ վկայակոչելով Յասբեր Պուարի վերլուծությունը 9/11-ից ի վեր գլոբալ Հյուսիսում հոմոնորմատիվային իսլամաֆոբիայի վերելքի մասին՝ ցույց տալու քվիր ազատական սուբյեկտների և շեղված քվիր հետադիմական երկրների բինարության ուժեղացումը այդ ցուցահանդեսների համադրողական մոտեցման մեջ:»

Ազադե Սարջոդյանը Բիրմինգեմի համալսարանի Արվեստների և իրավաբանության դպրոցի ասպիրանտ է, որտեղ նա նաև ստացել է մագիստրոսի կոչում Սեռականության և գենդերի ուսումնասիրությունների տիրույթում: Նրա հետազոտական հետաքրքրությունները ներառում են հետգաղութային տեսությունները, ֆեմինիզմը և ժամանակակից արվեստը: Նրա հիմնական թեման է սեռականության և գենդերային ինքնության ներկայացումը մերձավորարևելյան արվեստում:

Նա այժմ հետազոտում է մուսուլման տղամարդկանց ու կանանց մարմինների

ստերեոտիպական ներկայացումների փոխազդեցությունները տեսողական արվեստներում՝ անդրադառնալով ժամանակակից համադրողական պրակտիկաների թողած ազդեցությանը մասնավորապես Միացյալ Թագավորությունում: Ազադեն արվեստագետ է, որն աշխատում է մեդիայի տարբեր տեսակներով քանդակագործության և ինստալացիայի տիրույթներում: Նա ավարտել է Թեհրանի Գեղարվեստի համալսարանը պատկերազարդողի մասնագիտությամբ (մագիստրոս) և Թեհրանի համալսարանը քանդակագործի մասնագիտությամբ (բակալավր):

Զրույց գեների և ոչ-բինարության շուրջ

masharu (Նիդերլանդներ)
Մարիա Զաքարյան (Հայաստան)

«Գեներային կառուցվածքներ» Ֆեմի նիստական, քվիր միջազգային փառատոնի երկրորդ թողարկման շրջանակում օգոստոսի 11-ին ՖեմԳրադարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում արվեստագետ մաշարուի և լուսանկարիչ Մարիա Զաքարյանի հետ գեների, ոչ բինարության և ինքնությունների հարցերի շուրջ: Ոչ-բինարը գեներային քաղաքա կանության և սոցիալական ինքնության պատմության կարևոր մասն է. այն ընդվզում և մարտահրավեր է գեներային նորմերի գաղափարներին, դրա ֆիզիկական և հուզական դրսևորումների վերահսկմանը և «կարգի բերմանը»: Պատմության մեջ ոչ-բինար ձևերի և փորձառության բազմաթիվ օրինակներ կան, որոնք փոխանցվում են տարբեր տարածքների բնիկ գիտելիքի և մարդկանց միջոցով: Փառատոնի շրջանակ ներում արվեստագետ մաշարուն (masharu) նաև ներկայացնում է իր հետազոտական աշխատանքը այս հարցերի վերաբերյալ՝ «Գեներային քարտեզի» տեսքով:

masharu-ն (նրանք-նրանց) մաթեմատիկական կրթությամբ ստեղծագործող է: Նրանց նախագծերը միավորում են գիտական հետազոտությունը անձնական փորձառության և մշակութային պրակտիկայի հետ: 2011-ին masharu-ն դոկտորի կոչում են ստացել պատկերների մաթեմատիկական անալիզի տիրույթում Էյնդհովերի տեխնոլոգիական համալսարանում և ավարտել են Ամստերդամի լուսանկարչության ակադեմիան: 2013-2014 թթ. եղել են ռեզիդենտ Rijksakademie van Beeldende Kunst-ում (Ամստերդամ), իսկ 2018-ին ընկերակից արվեստագետ էին Հոլանդիայի Հումանիտար և սոցիալական գիտությունների ուսումնասիրությունների ինստիտուտում (NIAS-KNAW): masharu-ի աշխատանքները ցուցադրվել և հրապարակվել են Ավստրալիայում, Ավստրիայում, Չինաստանում, Խորվաթիայում, Կուբայում, Չեխիայում, Դանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Գվատեմալայում, Հոլանդիայում, Ինդոնեզիայում, Միացյալ Թագավորությունում, Միացյալ Նահանգներում և այլ երկրներում. մի շարք 66 միջազգային փառատոների, արվեստի բիենալների մասնակից են, այդ թվում՝ Մոսկվայի արվեստի 6-րդ Բիենալի:

Մարիա Զաքարյանը (նրանք-նրանց) լուսանկարիչներ են Հայաստանից: Նրանք ժամանակակից արվեստի ինստիտուտում (Հայաստան) «Արվեստի քննադատական ու կուրատորական կրթություն» ծրագիրն են ավարտել և վավերագրական լուսանկար չություն ուսումնասիրել «4PLUS» անկախ վավերագրական լուսանկարչության կենտրոնում (Հայաստան): Որպես փորձարարությամբ հետաքրքրված վիզուալ ստեղծագործող՝ նրանց աշխատանքը անալոգային լուսանկարչության համընկնումների ծիրում է: Նրանց աշխատանքի էությունը ինքնության, հիշողությունների, կապերի, ֆեմինիզմի,

ինչպես նաև քաղաքական ու անձնական բարդ հարաբերությունների
հատումներում նավարկելն է: